ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2021 թվականի N 2552

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐԻԵՏԱ ՍԻՐԵԿԱՆՅԱՆ ԲԱՂԴԱՍԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 15.11.2021 թվականին տրված արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ անհատ ձեռնարկատեր Մարիետա Սիրեկանյան Բաղդասարի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 12-րդ մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 15.11.2021 թվականին տրված զեկուցագրի և արձանագրության համաձայն՝ ԱՁ Մարիետա Սիրեկանյան Բաղդասարին 2021 թվականին իրականացրել է առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացում և (կամ) մատուցում, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված արարք է:

2021 թվականի նոյեմբերի 15-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով՝ Վանաձորի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի դեկտեմբերի 1-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ: Վարչական վարույթի լսումներին ԱՁ Մարիետա Սիրեկանյան Բաղդասարին չի ներկայացել, իսկ 19.11.2021 թվականին ուղարկված ծանուցագրի հետադարձ կտրոնը առկա չի եղել:

Վանաձոր համայնքի ղեկավարի 14 դեկտեմբերի 2021 թվականին ընդունվել է «Անհատ ձեռնարկատեր Մարիետա Սիրեկանյան Բաղդասարի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնելու մասին» թիվ 2542 որոշումը: ԱՁ Մարիետա Սիրեկանյան Բաղդասարին տույն որոշումը ստացել է 16 դեկտեմբերի 2021

թվականին (հիմք՝ 16.12.2021թ. առձեռն ստացած որոշումը)՝ համաձայն որի համարվում է պատշաճ ծանուցված:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակահիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակահիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 169[16]-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 169[16]-րդ հոդվածի 12-րդ մասով, 219[1]-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Անհատ ձեռնարկատեր Մարիետա Սիրեկանյան Բաղդասարին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169[16]-րդ հոդվածի 12-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

2. Պարտավորեցնել Մարիետա Սիրեկանյան Բաղդասարի ԱՁ-ին տուգանքի գումարը վճարել 900235401537 հաշվեհամարին:

3. Առաջարկել անհատ ձեռնարկատեր Մարիետա Սիրեկանյան Բաղդասարին մեկշաբաթյա ժամկետում դիմել Վանաձոր համայնքի ղեկավարին ստանալու քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու 2021 թվականի թույլտվությունը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

7. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 17
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2021 թվականի N 2553

ԿԱՐԵՆ ԱՐՄԵՆԻ ԿՈՍՏԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԱՆ ԱՐԱՅԻԿԻ ՆԱՐՈՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Մեխակ Պետրոսյանի դիմումի համաձայն՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 25.03.2021 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Կարեն Կոստանյանի և Արման Նարոյանի նկատմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Մեխակ Պետրոսյանը իր դիմումով հայտնել է, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող Մոսկովյան 23 հասցեի վերաբերյալ ստացել է շինարարության թույլտվություն: Հետագայում պարզվել է, որ տվյալ հասցեի դիմացի տարածքը Վանաձոր համայնքի ղեկավարի որոշմամբ հատկացվել է այլ քաղաքացիների, ինչը խախտում է իր սեփականության իրավունքը, խոչընդոտում է շինարարական աշխատանքներին և անանցանելի է դարձնում մուտքի և ելքի ճանապարհը:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 25.03.2021 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Կարեն Կոստանյանը և Արման Նարոյանը Վանաձոր քաղաքի Մոսկովյան փողոցի 23 հասցեում իրականացվող շինարարական աշխատանքներին և շինհրապարակի մուտքի-ելքի անցանելիության խոչընդոտներ են ստեղծում:

2021 թվականի մարտի 25-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2021 թվականի ապրիլի 12-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ:

09 ապրիլի 2021 թվականին Մեխակ Պետրոսյանը ներկայացրել է դիմում՝ վարչական վարույթի լսումների օրը հետաձգելու վերաբերյալ: Վարչական վարույթի լսումների օր է նշանակվել 23 ապրիլի 2021 թվականը:

23 ապրիլի 2021 թվականին ներկայացել է Մեխակ Պետրոսյանը, պատշաճ ծանուցված Կարեն Կոստանյանը վարչական վարույթի լսումներին չի ներկայացել, իսկ Արման Նարոյանին ուղարկված ծանուցագրի փոստային հետադարձ կտրոնը առկա չի եղել:

Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 23 ապրիլի 2021 թվականին ընդունվել է «Կարեն Արմենի Կոստանյանի և Արման Արայիկի Նարոյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնելու մասին» թիվ 861 որոշումը:

Վարչական մարմնին է ներկայացվել սույն որոշման փոստային հետադարձ կտրոնները, որի համաձայն՝ որոշումը Մեխակ Պետրոսյանը ստացել է 07.05.2021 թվականին, Կարեն Կոստանյանը՝ 03.05.2021 թվականին իսկ Արման Նարոյանը՝ 08.05.2021 թվականին:

Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 13 մայիսի 2021 թվականին ընդունվել է «Կարեն Արմենի Կոստանյանի և Արման Արայիկի Նարոյանի վերաբերյալ վարչական վարույթը վերսկսելու մասին» թիվ 986 որոշումը:

26 հոկտեմբերի 2021 թվականին Մեխակ Պետրոսյանի կողմից ներկայացվել է թիվ 02/15068 դիմումը:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում 29 նոյեմբերի 2021 թվականին տեղի են ունեցել վարչական վարույթի լսումներ, որին ներկայացել է Մեխակ Պետրոսյանը, իսկ Կարեն Կոստանյանին և Արման Նարոյանին ուղարկված ծանուցագրերի ետ վերադարձի կտրոններն առկա չեն:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Կարեն Արմենի Կոստանյանի և Արման Արայիկի Նարոյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2021 թվականի N 2554

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ 9 ՇԵՆՔ, 38 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2388 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գրիգոր Գուրգենի Կոստանյանի և Ռուզաննա Իշխանի Կոստանյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30112021-06-0012 վկայականը, հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր քաղաքի Ա. Իսահակյան փողոց 9 շենք, 38 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ա. Իսահակյան փողոց, 1-ին նրբանցք, 9 շենք, 38 բնակարան:

2. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 24 նոյեմբերի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Իսահակյան 1 նրբ թիվ 9 շենքի թիվ 38 հասցեում գտնվող բնակարանին նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 2388 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՀԵԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2021 թվականի N 2555

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ 42-14/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԹԱՄԱՐԱ ԲԱԳՐԱՏԻ ՋԱՆՎԵԼՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թամարա Բագրատի Ջանվելյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02082021-06-0043 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա 42-14/9 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող համայնքային սեփականություն հանդիսացող 18.87քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02082021-06-0043 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Թամարա Բագրատի Ջանվելյանին՝ ավտոտնակ տեղադրելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Թամարա Բագրատի Ջանվելյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 18.87քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 24 (քսանչորս) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

ՈՐՈՇՈՒՄ

20 դեկտեմբերի 2021 թվականի N 2556

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ 57-2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՅԿ ՄԵԽԱԿԻ ՎԵՐԱՆՑԱՆԻՆ ԵՎ ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐԱՄԻ ԽԱՆԶԱՏՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայկ Մեխակի Վերանյանի և Ռուզաննա Արամի Խանզատյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04112021-06-0077 վկայականը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց 57-2/2 հասցեում գտնվող, Հայկ Մեխակի Վերանյանին և Ռուզաննա Արամի Խանզատյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Սունդուկյան փողոց 57-2/2 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա)Ռուզաննա Արամի Խանզատյանին պատկանող 0.01550հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 110.45քմ շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Գ. Սունդուկյան փողոց, 57/7 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1).

բ)Հայկ Մեխակի Վերանյանին պատկանող 0.02422հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 140.58քմ շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Գ. Սունդուկյան փողոց, 57/8 բնակելի տուն (հատակագիծ թիվ 2):

3. 103.9քմ մակերեսով հողամասը թողնել ընդհանուր օգտագործման տակ Գ. Սունդուկյան փողոց 57/7 և 57/8 հասցեների միջև՝ հավասար բաժիններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 20
Ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2021 թվականի N 2557

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ 80/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԵՐՈՒԺԱՆ ՎԱՉԳԵՆԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԵՔ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՑԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մերուժան Վազգենի Ներսիսյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01112021-06-0050 վկայականը, ՏԱՐՈՆ ՍԵՐՈԲՅԱՆ ՀԵՆՐԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 80/1 հասցեում գտնվող, Մերուժան Վազգենի Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և դրանով զբաղեցված հողամասը՝ համաձայն ՏԱՐՈՆ ՍԵՐՈԲՅԱՆ ՀԵՆՐԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց 80/1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) Մերուժան Վազգենի Ներսիսյանին պատկանող 0.01612հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց 80/2 հողամաս (հատակագիծ թիվ 1).

բ) Մերուժան Վազգենի Ներսիսյանին պատկանող 0.00400հա մակերեսով հողամասի և նրա վրա գտնվող 19.1քմ մակերեսով ծածկարանի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց 80/3 ծածկարան (հատակագիծ թիվ 2).

գ) Մերուժան Վազգենի Ներսիսյանին պատկանող 0.02699հա մակերեսով հողամասի և նրա վրա գտնվող 143.85քմ մակերեսով բնակելի տան փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց 80/1 բնակելի տուն (հատակագիծ թիվ 3):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 դեկտեմբերի 2021 թվականի N 2558

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼՈՌՎԱ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 1/5 ՀԱՍՑԵԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հասմիկ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էլմիրա Արշալույսի Գասպարյանի 31.08.2021թ. թիվ 01/12449 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված 12.11.2021թ. թիվ ՎՆ 1-1 48/21 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Լոռվա խճուղի թիվ 1/5 հասցեի արևմտյան մասում գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող ընդհանուր 39.03քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 34.68քմ, որից 13.97քմ բենզալցակայան և 20.71քմ ծածկ) շինությունների և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.0067հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Փոխել Վանաձոր քաղաքի Լոռվա խճուղի թիվ 1/5 հասցեի արևմտյան մասում գտնվող 0.0067հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի այլ հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված շինությունների և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների ինքնակամ կառուցումը իրականացրած անձին շինությունները և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
6. Վանաձոր քաղաքի Լոռվա խճուղի թիվ 1/5 հասցեի արևմտյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ք. Վանաձոր, Լոռվա խճուղի, 1/6 բենզալցակայան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 20
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2021 թվականի N 2559

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ 3 ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 75/8-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՄՎԵԼ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀՈՎԱՍԱՓՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23 ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 745 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Սերյոժայի Հովասափյանի՝ 24.02.2020թ. 067/1124 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20022020-06-0021 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ 3 թաղամաս թիվ 75/8-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 21.0քմ մակերեսով ավտոտնակը 35700 (երեսունհինգ հազար յոթ հարյուր) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 28.0քմ մակերեսով հողամասը 53600 (հիսուներեք հազար վեց հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սամվել Սերյոժայի Հովասափյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Սամվել Հովասափյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 23 մարտի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ 3 թաղամաս թիվ 75/8-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված ավտոտնակը և դրանով զբաղեցված հողամասը Սամվել Սերյոժայի Հովասափյանին օտարելու մասին» թիվ 745 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2021 թվականի N 2560

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂ. ԹԻՎ 10 ՇԵՆՔ ԹԻՎ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԱՐԳԻՍ ԽԱԼԱԹԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՎ ԳՐ.ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ 10 /23 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԱՐԳԻՍ ԽԱԼԱԹԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԻՆԵ ԶՈՐԱԻԼԻ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Խալաթի Գալստյանի և Կարինե Զորաիլի Խառատյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1857355 և թիվ 0093351 վկայականները, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը, անշարժ գույքի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ, 27-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի բ) ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1.Միավորել Վանաձոր քաղաքի Դեմիրճյան փողոց թիվ 10 շենք թիվ 24 հասցեում գտնվող, Սարգիս Խալաթի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող և Գր.Լուսավորիչի 10/23 հասցեում գտնվող, Կարինե Զորաիլի Խառատյանին սեփականության իրավունքով պատկանող 148.72քմ ընդհանուր մակերեսով բնակարանները՝ համաձայն «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծի: Միավորված բնակարանների ընդհանուր մակերեսը կազմում է 148.72քմ, որի նկատմամբ Սարգիս Խալաթի Գալստյանի բաժնեմասը կազում է 110.54/148.72 մասը, Կարինե Զորաիլի Խառատյանի բաժնեմասը կազմում է 38.18/148.72 մասը:

2. Ճանաչել օրինական Սարգիս Խալաթի Գալստյանին և Կարինե Զորաիլի Խառատյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր

քաղաքի Դեմիրճյան փողոց թիվ 10 շենք թիվ 24 և թիվ 23 հասցեում գտնվող բնակարաններում իրականացված թվով 13 ինքնակամ ձևափոխումները:

3 Սույն որոշման 2-րդ կետում նշված թվով 13 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 35430 (երեսունհինգ հազար չորս հարյուր երեսուն) դրամ գումարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Կ. Դեմիրճյան փողոց, 10 շենք, 23-24 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՎԱՆԻԿ ՕՀԱՆՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 21
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ու Մ

21 դեկտեմբերի 2021 թվականի N 2561

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՇՈՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՕԳՈՍՏՈՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1658 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալեքսանդր Աշոտի Գևորգյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1900711 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր քաղաքի Թատերական փողոց թիվ 8 հասցեում գտնվող տարածքի գործառնական նշանակությունը՝ բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություն՝ տարածք:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Թատերական փողոց, 8/1 տարածք:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 06 օգոստոսի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Թատերական փողոց թիվ 8 հասցեում գտնվող Ալեքսանդր Աշոտի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող տարածքի գործառնական նշանակությունը փոխելու և փոստային հասցեն հաստատելու մասին» թիվ 1658 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ [illegible]ԱՆՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 21
ք.Վանաձոր